ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվար

(առարկա)

Թեմա՝ Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի անձի ձևավոման և զարգացման գործընթացում՝ դերային խաղերի միջոցով

Կազմեց՝ Գալյա Գասպարյան Սիմոնի

(անուն. ազգանուն,հայրանուն)

«Ներքին Հանդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող հաստատության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------4
ԳԼՈՒԽ 1 < ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ >----------8
ԳԼՈՒԽ 2 ----------11
ԳԼՈՒԽ 3 ----------16
Եզրակացություն, առաջարկություններ----------20
Օգտագործված գրականության ցանկ----------22
Հավելված 1----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակը եւ հետազոտական հարցը

Բացահայտել հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման և զարգացման գործընթացում՝ դերային խաղերի միջոցով: Արդյո՞ք կարող են դերային խաղերը դեր ունենալ ինքնաճանաչողական և սոցիալական կոմպետենցիա ձևավորելու հարցում

Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը

Ձեր թիրախային խմբի համար «Ամենամեծ ստեղծագործողը ժողովուրդն է ու նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը». . . «Հեքիաթները անդունդներ են՝ խորը , անծայր , անվերջ. . . », «Հեքիաթը հարուստ ու շքեղ աշխարհ է», «Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է, նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում». Հովհաննես Թումանյան Հեքիաթներ սիրում են բոլորը՝ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը: Հսկայական է հեքիաթի դերն ու նշանակությունը մարդու կյանքում:: Հեքիաթները ստեղծվել են շատ վաղուց, ժողովրդի կողմից: Այն որպես բանավոր զրույց փոխանցվել է սերնդից սերունդ և եկել հասել մինչև մեր օրերը: Հեքիաթների ստեղծման պատճառ են հանդիսացել մարդկանց երազանքները, իղձերը, դժվար ապրելակերպը, ձգտումը առավել լավ, բարվոք կյանքի: Վաղ ժամանակներից մարդիկ երազել են կառավարել բնության ուժերը, ըմբռնել 4 աշխարհում տեղի ունեցող ամեն ինչ, երազել են ազատ աշխատանքի, արդարության և երջանկության մասին: Բոլոր երկրներում մարդկանց երազանքները նման են եղել, բայց ամեն մի ժողովուրդ դրանք արտահայտել է յուրովի: Ժողովրդական այդ երազանքներից ու ակնկալիքներից էլ ծնունդ է առել հեքիաթների զարմանահրաշ աշխարհը, որն ապրում և գոյատևում է իր հատուկ օրենքներով: Հետազոտական աշխատանքի շրջանակներում մեր

առաջ խնդիր ենք դրել ըստ կարելվույն ուսումնասիրել հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման և զարգացման գործընթացում: Կարևոր է, որ ծնողները և մանկավարժները գիտակցեն, որ հատկապես իրենցից է կախված, թե ապագայում ինչպիսին կդառնա իրենց երեխան. կլինի նա երջանիկ և վստահ իր ուժերին, թե կլինի կոմպլեքսներով, չարացած աշխարհի վրա, չիմանալով իրեն ինչպես դրսևորի ՝ չունենալով որոշակի գիտելիք, հմտություն և պաշար:

2

Ուսումնասիրվելով և դաստիարակվելով հեքիաթով՝ կրտսեր դպրոցականը ընդունակ է ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման՝ մասնավորապես հեքիաթի դերային խաղերի ընդգրկմամբ աշակերտները դրսևորում են հարգանք, ազնվություն, պատասխանատվություն, ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ 5 անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակությունից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և համագործակցային կոնֆլիկտների խաղաղ կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչել դրանց տարբերությունները: Արվեստի յուրաքանչյուր գործ և նրա հեղինակի անհատականությունը արժևորվում են ստեղծագործության թեմատիկայով, արտահայտման միջոցների ընտրությամբ և այլն: Գեղարվեստական երկի, այս դեպքում հեքիաթի միջոցով գրականության մեջ դրսևորվում է այս կամ այն ժողովրդի ազգային կերպարը, նրա կենսագրությունը, մտածողության ձևը: Իսկ ահա հեքիաթների դերը մանուկների դաստիարակության գործում ինչպես միշտ, նույնպես և այսօր արդիական է:

Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը

Ինքնաճանաչողական և սոցիական կոմպետենցիա

3

Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին

Առարկայի դասավանդման մեթոդիկա

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ
● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից
● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:
Պարտադիր է կատարել հղում աղբյուրին

ԳԼՈՒԽ 1 . ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենահին ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկն է: Նրա ստեղծողն ու պահպանողը միայն ժողովուրդն է: Հեքիաթը բանավոր,արձակ պատմվող հրաշապատում ստեղծագործություն է՝ հիմնված երևակայական հնարանքի վրա, հնարանք, որի բազմապիսի և ավանդական ձևերը չեն կրկնվում բանահյուսության որևէ այլ ժանրում: Հեքիաթներում արտացոլված են ժողովրդի աշխարհզարգացման ու աշխարհայացքի բովանդակությունն ու բնույթը, դարավոր պայքարը կեղեքիչների դեմ, նրա ազատատենչ և ըմբոստ ոգին,

խաղաղ ստեղծագործ աշխատանքի անկոտրում ձգտումը, ժողովուրդների բարեկամությունը, նրա վառ հայրենասիրությունը, լավատեսությունը և բոլոր այն լավագույնը, ինչ ձեռք է բերել նա իր պատմական զարգացման ճանապարհին1 : Հեքիաթների մեջ տեսնելով ժողովրդի հանճարի ուժը, նրա հզոր երևակայությունը՝ Ուշինսկին դրանք անվանում է <<ժողովրդական

մանկավարժության փայլուն փորձեր, որի հետաքրքրական սյուժեն համակում է երեխայի էությունը, իսկ հաճախ կրկնվող բառերն ու դարձվածքները երեխային ոչ միայն լեզու են սովորեցնում, այլև նկարագրվող դեպքերն ու հերոսները չափազանց արագ կերպով տպավորվում են նրա հիշողության մեջ՝ իրենց բոլոր գեղեցիկ հատկություններով>>:

2 Հեքիաթը երեխաների համար գոյությունունեցող միակ իրականությունն է:

Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն: Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով : Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Միաժամանակ այդ բոլորը ներկայացվում են երեխայի համար հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր… հեքիաթի թեմաները անվերջ են: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան

իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ: Մեծահասակները, ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ-որ բան հուշել, դժվարանում են համապատասխան բառեր գտնել, վախենում են, որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց: Այդ իրավիճակից ելքն այն է, որ մեծահասակը երեխայի հետ ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը, իսկ գործնական ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:,, Այն ամենը,ինչին նայում ես,կարող է հեքիաթ դառնալ և դու կարող ես պատմություն կերտել այն ամենից,ինչին դիպչում ես,, Հանս Քրիստիան Անդերսեն/ 3 Հարյուրամյակներ շարունակ մարդիկ ունեցել են շատ բարձր բարոյական և հոգևոր զարգացածության հասած առաջնորդներ, որոնք իրենց գիտակցությամբ անհամեմատ ավելի առաջ են եղել ժամանակակիցներից, նրանք իրենց առաքելությունն են համարել ուղղորդել և սատարել մարդկանց: Ուստի, հաշվի առնելով տեղային և ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկությունները, նրանք ընտրել են տարբեր միջոցներ:

6

Իմաստությունը մարդկանց փոխանցելու ձևերից մեկն էլ եղել է այն, ինչը հետագայում կոչվեց ազգային ավանդություն: Այսպիսով ժողովրդական հեքիաթները, առակներն ու լեգենդները մարդկային էության շատ ավելի խորը իմացություն և հավերժական իմաստություն են կրում իրենց մեջ:

ԳԼՈՒԽ 2 ՀԵՔԻԱԹԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց հետաքրքիր զբաղմունք է: Եվ նրա նշանակությունը չի կարելի չգնահատել, չի կարելի ինքնահոսի թողնել, կամ ամբողջովին վստահել մանկապարտեզին ու դպրոցին: Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն կազակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը: Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության, վարքի, նրանց աշխարհայացքի,արարքների, սովորույթների վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը: 4 Խոսել երեխայի կյանքում հեքիաթի հսկայական նշանակության մասին և չանդրադառնալ դաստիարակչական կողմին՝ նշանակում է պարզապես աչքաթող անել հեքիաթի հիմնական առաքելությանը, քանզի, հեքիաթ ասելով, մենք հասկանում ենք դաստիարակություն, իսկ, դաստիարակություն ասելով, անմիջապես հիշում ենք հեքիաթի դրական հերոսին, որի միջոցով էլ դաստիարակում ենք երեխային՝ նրա մեջ սերմանելով բարեկամության, ընկերության,

սիրո մաքրության և ազնվության զգացմունքներ, որոնք մեկ բառով կոչվում են մարդասիրական արժեքներ:

5. Հեքիաթը նախապատրաստում է երեխային մաքուր, գեղեցիկ սիրուն, որն սկսվում է երեխայի հոգում իր համար օտար մարդու նկատմամբ բարի զգացումների՝ սրտացավության,

կարեկցության, նրբազգացության ամրապնդումից: Երեխայի ամբողջ կյանքը, այն ամենը, ինչ նա տեսնում է, անում, զգում, նրան համոզմունք են ներշնչում, որ կյանքում ամենաթանկ բանը մարդն է, որի բարձրագույն արժանիքը, պատիվը, բարոյական արիությունը ուրիշ մարդու երջանկություն պարգևելն է, նրա համար գեղեցկություն ստեղծելը և դրա հետ միասին նաև բարի, գեղեցիկ դառնալը: Հեքիաթի միջոցով երեխաների հոգում անկեղծ զգացումը դառնում է այն հեքիաթային կենարար ջուրը, որը ցրում է թախիծը, թեթևացնում վիշտը, վերադարձնում ուրախությունը: <>: 6 Այսպիսով, հեքիաթը ողողված է մարդասիրական վեհ գաղափարներով. այն իր մեջ ընդգրկում է այն լավագույնը, որը ձեռք է բերել մարդկությունը, և այդ ամենը համակում է երեխաների սրտերը, քանի որ <>: Անսահման մեծ է հեքիաթների ինչպես դաստիարակչական, այնպես էլ պատմաճանաչողական և գրական-գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Հեքիաթները ժողովրդի համար միայն ժամանցի առարկա չեն եղել, որոնցով կարելի էր կարճել ձմռան երկար ու ձանձրալի գիշերները, փարատել ցերեկվա ծանր առօրյայի ճնշիչ տպավորությունը: Հեքիաթները կատարել են հասարակական լայն զանգվածների լավագույն ձգտումների ու իղձերի յուրահատուկ հաղորդչի դերը, ամրապնդել են նրանց նվիրական ավանդները իրար հաջորդող սերունդների գիտակցության մեջ: Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները, որոնք մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար, արտահայտել իր մտորումները, որոնել է իր կրած տառապանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամեն տիպի բռնության, ճնշման, անարդարության ու շահագործման դեմ:

,,Եթե կարող ես երազել այդ մասին,ուրեմն կարող ես և անել այդ,,:/Ուոլթ Դիսնեյ/: 7 Այսպիսով, հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացման ամենամատչելի տարբերակներից մեկն է: Այդպես եղել է, կա ու կլինի: Պետք չէ թերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում: Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա, կուղղի և կլավացնի նրա պահվածքը, ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը: Հեքիաթի հրաշք աշխարհը գրավում է երեխաներին և այն,ինչոր նրանք չեն կարող տեսնել իրականության մեջ,տեսնում են այդ գեղեցիկ աշխարհում:Հեքիաթներն ունեն կրթիչ և դաստիարակիչ ուժ: Երեխայի համար հեքիաթների կարևորության, նշանակության մասին կարելի է խոսել անվերջ: Միանշանակորեն համակարծիք ենք որոշ հետազոտողների վերջնական եզրակացություններին՝ հրաշապատում հեքիաթների դերը երեխաների զարգացման եւ առողջ հոգեկերտվածք ձեւավորելու համար անգնահատելի եւ անփոխարինելի են: Ի վերջո, «երեխան, որը մեծացել է հեքիաթներ ու լեգենդներ ունկնդրելով, նկատելիորեն ավելի առողջ է, խելացի, քաջ,կրեատիվ» Ջ. Ռոդարի:

8. ԳԼՈՒԽ 3 ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Կրտսեր դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից. դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ:

Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն։ Որն էլ պիտի հիմք հանդիսանա երեխայի «ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը: Այս տարիքից պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի համարձակ ստեղծականությունն ու երևակայությունը, ուշադրությունն ու մտածողությունը: Այս տարիքում երեխաները հիմնականում ընկալում են զգայարանների միջոցով, ուստի կարելի կազմակերպել այնպիսի խաղեր, որոնք կլինեն տեսողական, զգայական, դիդակտիկ: Երեխայի խաղի մեջ խոր ստեղծագործական բովանդակություն կա:Խաղի մանկավարժական նշանակությունը ընդգծել և հետաքրքիր ու օգտակար մտքեր են արտահայտել Յա. Ա. Կոմենսկին, Ժ.-Ժ.Ռուսոն, Կ. Ուշինսկին,Ա. Մակարենկոն, Յա. Կորչակը և շատ ուրիշներ: Խաղի դաստիարակչական նշանակության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հոգեբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, արվեստագետներ, որոնք հիանալի գիտեն երեխայի ներաշխարհը։

Մեծ մանկավարժ Սուխումլինսկին ասել է տարրական դպրոցի մասին.«Տարրական դպրոցը պետք է տա գիտելիքների կայուն շրջանակ, և ոչ միայն տարրական թևը, այլ նաև մյուս օղակները: Ուսուցումը պետք է կապված լինի մտավոր ֆիզիկական, աշխատանքային, գեղագիտական, բարոյական ուժերի, այսինքն բազմակողմանի խաղի հետ, լինի հուզիչ, հետաքրքիր և դառնա մի գիրք, որը երեխան ցանկանա կարդալ»:«Արդեն սովորելը նրանց համար դառնում է հետաքրքիր, գրավիչ, ուր կա խաղի

«պայծառ լույսը»: Խաղը երեխայի մտածողության ազնիվ զգացմունքների ու ձգտումների կենսատու աղբյուրն է : Խաղի միջոցով հատկապես երեխաները ստանձնում են հասարակական դերեր և յուրացնում վարքի կանոններ։Խաղը սովորեցնում է , փոխում, դաստիարակում և ինչպես նշում է Վիգոտսկին՝ «իր հետևից տանում է անհատի զարգացումը»։

10

Դերային խաղի կարևոր գործառույթներից մեկն է խնդրահարույց իրադրության լուծումն է։ Դա նպաստում է ասելիքի պատճառաբանվածության ապահովմանը։ Խթանում է սովորողների հաղորդակցական ակտիվությունը, քննադատական և վերլուծական մտածողությունը, փաստարկելու խոսակցին համոզելու կարողությունները։9 Դերային խաղի նպատակներն են՝

● Զարգացնել սովորողի իմացական գործընթացները (մտածողություն, երևակայություն, ուշադրություն, ….) և հուզակամային ոլորտը (հույզեր, զգացմունքներ, ...), ստեղծարարությունը:
● Զարգացնել սովորողի հնարամտությունը, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունը, աշխատասիրությունը և հետևողականությունը:
● Ձևավորել իր և ընկերների գործունեությունը գնահատելու կարողությունը:
● Զարգացնել անհատապես և խմբով աշխատելու կարողությունը, միմյանց հարգելու, փոխօգնություն ցուցաբերելու պատրաստակամություն: Հաշվի առնելով այս բոլոր նկատառումները՝ որոշեցի ինքս հետազոտություն կատարել և ստեղծագործական որոնումների արդյունքում

ստանալ դաս-ներկայացում , որտեղ երեխաները համագործակցային խմբերի բաժանվելով և նախապես ստանալով առաջադրանքները ստեղծագործական մոտեցմամբ և ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմամբ ներկայացրին բոլորիս քաջ հայտնի հեքիաթը ՝ ապահովելով հետազոտելու և վերլուծելու կարողությունների , հմտությունների և ինքնաճանաչողության գործընթացը։

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին

Ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ եզրակացությունների՝

● Կրտսեր դպրոցականի կյանքում հեքիաթն ունի հսկայական նշանակություն։Հեքիաթի միջոցով կարելի է երեխաների մեջ գործելակերպի և բնավորության լիարժեք հատկանիշներ դաստիարակել։ Հեքիաթի հրաշք աշխարհը գրավում է երեխաներին և այն ինչ նրանք չեն կարող տեսնել իրականության մեջ՝ տեսնում են այն աշխարհում՝ կարևորելով բարությունը, սերը, կարեկցանկն ու մարդուն օգնելու պատրաստակամությունը։ ● Դերային խաղերը կրտսեր դպրոցականի համար ուսուցման լավագույն միջոցն է։ Դերախաղի ընթացքում է, որ ուսուցիչը ավելի լավ է տեսնում երեխայի ուշադրությունը, ինքնավստահությունը, շուտ կողմնորոշվելու ունակությունն ու ճարպկությունը։Օգտագործելով դերային խաղերը՝ կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում, կարելի է գալ այն

եզրահանգման, որ դասը դառնում է ավելի արդյունավետ և նպատակային։Խաղային մեթոդի ընթացքում զարգանում է աշխատասիրություն, ուշադրություն, պատասխանատվության զգացում։ Կրտսեր դպրոցականը տիրապետում է վարքի բարոյական նորմերին և կանոններին, որոնք որոշիչ դեր են խաղում նրանց անձի ձևավորման և զարգացման գործում։

● Աշխարհը շարունակ փոխվում է մարդկային գործունեության արդյունքում։Արդի աշխարհը հետևանք է երեկվա մեր գործելակերպի, իսկ մեր այսօրվա գործողությունները պայմանավորում են մեր ապագան։Այս գիտակցությամբ կարող ենք այսօր օգնել մեր աշակերտներրին՝ հետազոտելու և վերլուծելու այն գործընթացները, որոնք ներգործություն ունեն ապագայի ձևավորման վրա։

Հարկավոր է ուղղորդել կրտսեր դպրոցականին, որպեսզի կարողանա գիտակցված և պատասխանատվությամբ գործել՝ նպաստելով աշխարհաճանաչողական և ինքնաճանաչողական, սոցիալական կարողունակությունների ձևավորմանը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Կարապետյան,
2. Հ. Հովասափյան, ,
3. Ռ. Կարապետյան,
4. Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան , ,
5. ՀՀ ԿԳՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ , , 2009 թ.
6. Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան,
7. Մ. Թադևոսյան, Ս. Խաչատրյան ,
8. https://kznakhimnadram.blogspot.com/
9. https://lib.armedu.am/